

ԽՈՒՉԱԿ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

գրութիւններ, որոնք եւ չեն դարձուի՝
պէտք է խրկել «խոսակի» վարչութեան
Բուստոյ
Administration dn «Khousag» Rousthouk

Պաշտարանի համար տարեկան 10 փր.
« « վեցսունեան 5 «
Օսար երկիրներու համար տարեկան 12 «
« « « վեցսուն. 6 «

ՃՇՄԱՐԻՏ ՈՒՂԻՆ

Որքա՞ն զաղափարներ կան որոնք
ճշմարտութեան քային տակ պահուած
են. որքա՞ն մտածումներ կան որոնք
առաջի պէս ընդունուած են շատերէն
և ապա զայն վայրկեան մ'ը անգամ չեն
քննուած հիմէն. որքա՞ն հետեւութիւն
ներ կան որոնց հախադրեալները վե-
ճի առարկայ են. և որքա՞ն անձեր
կան որոնք կիրքերէ ու շահերէ պատր
աշքերով տարբեր կը տեսնեն կամ կ'
ուզեն տեսնել իրողութիւնները և այդ-
պէս ալ կը ներկայացնեն ուրիշներու
Բանականութիւն, ե՞րբ պիտի բլլայ
թագաւորութիւնդ տիկզերական:

Եթէ ցաւալի բան մ'ը կայ, գաղա-
փարներու ու ծրագիրներու տարբերու-
թիւնը չէ, այլ անկեղծութեան, խղ-
ճամտութեան, ճշմարտութեան և մի-
այն ճշմարտութեան հուրուելու պա-
կան է: Իսկ ա՛յլ աւելի ցաւալի է այն
իրողութիւնը որ շատեր՝ իրենք իրենց
մէջ դատելու յոգնել չուզելով, վերջը
վերջը կը մատնուին յուսախարութիւն-
ներու ու կորուստներու, անուշահերով
պատրանքներ կամ հետեւելով խախտու

դաւանանքներու:

Եթէ ամէն հայ ինք իրմէն դատե-
լու վարժուած բլլար, որքա՞ն դիմակ-
ներ վար ախար առնուէին, որքա՞ն
գաճաճներ չպիտի համարձակէին երե-
ալ, որքա՞ն կեղծանոյշներ ախար խա-
տաւակուէին, և այս ամէնը ինքնին,
առանց մեծ ճիգի, առանց անպատե-
հութիւններու: Հայ ժողովուրդը (այս
բառով կը հասկնանք ամբողջ հայու-
թիւնը, ամբողջ հայ գաւազարները)
պէտք է ուշալ երի միանգամ ընդ միշտ
դործածէ բանականութիւնը, չընդունի
մանաւանդ պատգամ, վերջնականա-
պէս համոզուած բլլայ թէ ինք պիտի
կազմէ իր բարեկաւարտութիւնը, շաւ տ-
պաւորէ միտքին մէջ ա՛մ ճշմարտու-
թիւնը. «Ինչ քեզ զգնէ որովհետեւ
երկին քեզ չպիտի օգնէ»: Հայ ազգին
գարաւոր առաջադրանքները և մանա-
ւանդ վերջին առկալի գէպները կը
բաւեն ապացուցանելու այս խոսքին ճշ-
մարտութիւնը, չըսեմ՝ այս առաջին:

Այս այսպէս բլլալով, որքա՞ն ուրեմն
ճշմարտ ուղին. հետեւի՛ր ճշմարտ
դիտութեան, հակնա՛լ մեր ցաւերուն
պաճառները և իրական գարմաննե-
րուն վրայ մտածե՛ր թէ քնացնել հի-
ւանդը, զայն զորքել պարբանքներով,

խաւիլ անոր անժանոթ Աստուածի մը անսահման բարութեան վրայ որով պիտի ողորդէ զինք որ մը, և թողուլ հիւանդը յոյսերու տառապանքի մէջ մի և նոյն ատեն։ Ո՞րն է ճշմարիտ ուղին. — բնել թէ արդի կաղմակերպութիւնները, գաղափարն ըլլայ, կրօնական, կրթական, տնտեսական, բնասանական և այլն, յարմար են ժամանակին պահանջներուն թէ ամէն ժողովուրդ ունեցած կառավարութեան արժանի է, կամ թէ գնել հայ ժողովուրդին աշխին առջև գիտութեան մաղէն անցած ուսկներեութեամբ փայլուն սկզբունքներ, ճշմարիտ իտէալներ, որոնց հասնելու համար պէտք է ամէն ճիգ թափէ սակայն մեթոտաւոր կերպով, սակայն նկատուութեան առնելով միշտ իր պայքարելու ուժերը, ու անհրաժեշտութիւնը կամ ինչ որ նոյն է, ժամանակը, տեղը և պարագան։ Որն է ճշմարիտ ուղին. — սկզբունքները և անոնց գործադրութեան եղանակները զանազանել իրարմէ, թէ միջոցներուն գէշութենէն մերթել նաև սկզբունքները, զանոնք փխտակար համարել։ Ո՞րն է ճշմարիտ ուղին. — մեկուսական ու գիժ ներշնչել ազգին, ազգամոլութիւն՝ քարոզել, թէ ցուցնել թէ կապուած է մարդկութեան հետ, ենթակայ անոր ազդեցութիւններուն։

Ենթադրենք պահ մը, ո՞վ ազգասէրներ թէ ձեռք պէս մտածելով ու ձեռնման գործելով ազատեցինք հրաշքով հայ ազգը և անոր մինչև անգամ թափառութիւն տուինք։ Անկեղծօրէն կը հաւատա՞ք որ հայ ազգը փրկեցիք այլ և այլ կապերէ որոնք կը կաշկանդեն իր խիղճի, միտքի խաւի ազատութիւնը և դրիք այն վիճակին մէջ որ կրնայ բարեւաստ ըլլալ, եթէ ուղէ. կրնա՞ք երաշխաւորել որ թաղաւորը զինք պիտի նկատէ միշտ պետութեան ծառան

և ոչ թէ պետութիւնը, պաշտօնատարները վեր պիտի դառնն ընդհանուրին շահերը անձնական շահերէն, դրամատէրները չպիտի կեղեքեն անժառանգները, քաղաքները չպիտի արհամարհեն գիւղացիները և գիւղացիները նորէն չպիտի տառապին այլ և այլ ծանրութիւններու տակ։ Կրնա՞ք ապահովել որ հայ ազգը տէր փոխած չպիտի ըլլայ այդ ձեռով։ Ընդունինք պահ մը որ այդ կառավարութիւնը ձեռած ըլլայ անգլիականին վրայ, մի՞թէ անգլիան չունի ներքին խոր վերքեր, որոնք նոյն իսկ յառաջ եկած են այդ կաղմակերպութենէն։ Ընդունինք այնպէս թէ հայ ազգը հաստ փափալելի վիճակի մը. լայն տեական կը կարծէք զայդ երբ շուրջ գտնուին բարբարոս ժողովուրդներ։ Իսկ եթէ այս ձեռով չէք բմլունք հային ազատութիւնը, եթէ կ'ուղէք զայն հաստատ հիմերու վրայ գնել, ուրիշ միջոց չկայ լայն եթէ գիմել գիտութեան։ Այլ անուշուտ է քարոզել թէ ժողովուրդը չհասկնար այնպիսի բաներ, թէ ատոնց ժամանակը չէ։ Եթէ ատոնց ժամանակը չէ, չէ նաև ազատութեան ժամանակը։ Պէտք է անկեղծ ըլլալ. այս հակառակութենէն դուրս ելլելու համար կամ պէտք է ընդունիլ որ ձեռ ուժերէն վեր է գիտութեան հետեւի և կամ ուրիշ շարժառիթներ ունիք ձեռ ճառախոսութիւններուն տակ։ Հայ ազգին իրական ազատութեան աշխատողները պէտք է ջանան անոր մատչելի դարձնել դարու ճշմարտութիւնները աւմէն նեւթերու վրայ։ անոր հակցնել թէ եկրագունդի վրայ էական են անհատները և բնկերութիւնները, ազգերը երկրորդական են և կարեւորութիւն ունին ժամանակին նայելով. թէ անհատները ազատ են մինչև իրենց բնկերին իրաւունքներուն չփխտելու ահա

մանր. թէ ամէնն ալ իրաւունք ունին վայելելու գիտութեան ու բնութեան բարիքները, բաւական է որ կատարեն իրենցմէ պահանջուած լանաւոր պարտականութիւնները. թէ գիտութիւնը ու բարելաւութիւնը պէտք է համալիրարհային ըլլան որպէս զի առնուի տեսական ըլլան. թէ այստիպի վիճակի մը հասնելը իրենց մէկ կախում ունի, չնչելով պատճառները. թէ ճակատագրականութիւն չկայ այլ տգիտութիւն կայ. թէ կարգ մը կրօնական, քաղաքական, կրթական, տնտեսական, բնատնական և այլն ճճարտութիւններ բաւածները խախտահիմեր ունին, ուստի պէտք է որ խղճամտութեամբ զննուին և առաջուն ամէն խլաւ միջոցներով. թէ մարդ մարդկային կաղմակերպութեան մէջ, բջիջ մէկ, մի և նոյն ատեն առնոր հետ ևերտ կապուած մի մարդ, թէ մարդկային բնկերրութիւնը՝ զործարանաւոր վիճակէն կը դառնայ հետոյհետէ մեքենական, և այլն և այլն: Այս է ճճարիտ ուղին և այս ուղին պիտի առաջնորդէ մեզ իրական աղատութեան:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՀԱՄԵՐԱՇ ԽՈՒԹԻՒՆԸ

Պարոն Ֆիլիքս Ֆօրի պարագան ճիշտ առնին կը հասնի դատելու և ճշգիւլ համար՝ անհատին և պատասխանատուութեան վերաբերող կարգ մը վարդապետութիւններու նկատմամբ եղած կարծիքին վիճակը: Պարոն Ֆիլիքս Ֆօր արժանացաւ ընդհանրապէս հաւանութեան ու չնհորաւորութեան իր սիրածին հետ ատենով ամուսնանալուն

համար, առանց հոգ ընելու իր աներոջ վիճակը ու գործերը: Ընկերական պայմանագրութիւններու ու նախապաշարման այս արհամարին մէջ տեսնուեցաւ գովեստի արժանի վեհանձնութեան ու արիութեան գործը:

Այս պատճառով անհատական վարդապետութիւնը հաստատութիւն գտաւ ու դաւանուեցաւ այնպիսիներէ, զորս շատ չէին սպասեր մարդիկ տեսնել իրենց կուսակիցներուն մէջ: Այս հակընկերական վարդապետութեան համեմատ՝ որ բան մը նկատողութեան չառնէր— ոչ՝ ծագում, ոչ՝ միջավայր, ոչ՝ դէպք և ուր ա՛լ աւելի բացարձակ է քան սկզբնական անկման տոկման, անհատը տեսակ մը ինքնասերութիւն է չունենալով առնչութիւն բանի մը հետ, ինքիւրմով միայն բարձրանալով, պատասխանատու ըլլալով միմիայն իր գործերուն մասին, առանց կապի զինք սերողներուն, իր մերձաւորներուն և սերունդին հետ, ոչ՝ իր նախնիքներուն արարքներէն գոհ մնալիք և ոչ՝ ալ անոնց սխալներէն ցաւելիք բան մ' ունենալով, քանի որ այդ նախնիք՝ բուն ինքը չէին:

Քանի որ, անհատականութեան վարդապետականներուն համար, անհատը պատասխանատու չկրնար բռնուիլ ոչ բարիին և ոչ՝ չարին մէջ զինք բուն սերողներուն համար, նա՛ նուազ պատասխանատու կրնայ ըլլալ իր խնամիններուն սերողներուն և նոյն իսկ խնամիններուն նկատմամբ, և նուազ հետեւաբար իր համազգիներուն՝ և համաքաղաքիներուն մասին: Այս վարդապետութեան տրամաբանական ու ազետալի եզրակացութիւնը, որուն առջեւ չեն նահանջեր սակայն վարդապետականները, այս է որ բնաւ՝ համերաշխութիւն չկայ մարդերուն մէջ (համերաշխութիւնը ըլլալով պատասխանատու հանրութիւն մը) և թէ չկայ ոչ՝ ընտանիք, ոչ՝ հայրենիք կամ ազգ: Եւ այնպէս կը պատահի որ իրերու բերումով՝ Պ. Ֆիլիքս Ֆօր, Ֆրանսական Հանրապետութեան նախագահը, կը դառնայ այս վարդապետութեան մարմնացումը, զոր կը դաւանի ոչ՝ թէ խօսքով կամ գիրքերու մէջ, այլ իր ընթացքով և իր գործերով, ինչ որ դաւանելուն լաւագոյն կերպն է:

Անհատական վարդապետութիւնը անտեսելի հետեւութիւններու կը տանի, եթէ ընդունուի իր առաջին և հիմնական ստո-

րասութիւնը, այսինքն թէ անհատը ինքնասերութիւն մէ: Բայց ճիշդ այս ստորութիւնն է որ վիճելի է շատ: Սերնդական օրէնքները դեռ մութ են եւ թերեւս միշտ պիտի մնան մութ: Բայց սա շատ ստոյգէ որ անհատը ուրիշ բան մը չէ բայց եթէ զարգացումը գործարանական սաղմի մը, որ՝ փոփոխելի, կարգ մը պարագաներու մէջ, փոփոխուած մասամբ մը սաղմնային վիճակին մէջ ձուլի տարրերէն ուր (ձուլի) սաղմնաւորած է, կը վերարտադրէ կամ կը շարունակէ սերողը, ինչպէս ցորենի հատէ մը առաջ եկած հասկը կը վերարտադրէ այն հասկը, ուրկէ այս հատիկն էր ելած: Նոյն իսկ ներկի է հաստատել որ խնդրոյ առարկայեղող գործարանական սաղմը խորհրդաւոր կերպով կը փոխանցուի նախնիքներէն սերուղէ սերունդ, քանի որ կը զանեն սերունդներուն մօտ գեմադիծեր, որպիսութիւններ, ուժեր, յարմարութիւններ, որոնք յատկանիշը կը կազմէին պապումը: Այսպէս առհաւական նմանութիւնը՝ որ միայն է ընկերական հարկաւորութեան կազմելու համար ժառանգականութեան վարդապետութիւնը (այդ հաստատուած է աշխարհի սկիզբէն ի վեր, կրնան ըսել), բլլալով իրողութիւն մը այնքան հին որքան ինքը (աշխարհ) եւ այնքան աւելի հաստատուելի, որքան մարդկային խումբերը (թէեւ թափառաշրջիկ) աւելի անթափանցելի էին օտար տարրերուն:

Բայց եթէ անհատը՝ ինքնասերութիւն մը չէ, սաղմը՝ ուրկէ առաջ կուգայ եւ որ (սաղմ) է ինքը, գործարանական բազմացութիւն մ'է, փոփոխելի՝ որոշեալ չափով մը եւ կարգմը պարագաներու մէջ, եւ փոփոխութիւնը՝ այն աստիճան է որ կարգ մը նոր տարրերու կամ նոր ուժերու յաւելումը՝ այն բազմացութեան մէջ որուն արտադրութիւնն է ինքը, կ'ընչէ կարգ մը գործարաններու եւ յարմարութիւններու զարգացումը զանազան համեմատութիւններով ի վնաս ուրիշներու, ինչ որ կը հաստատէ տարրերութիւն մը համազգիներուն մէջ, նոյն իսկ այն ատեն երբ ամէնքը կը պահեն իրենց առաջ եկած ընտանիքին եւ ցեղին ընդհանուր նկարագիրները, ինքնին կը հասկցուի որ այս տարրերութիւնները այնքան նուազ մեծ են կամ թէ սկզբնական նկարագիրները այնքան աւելի համաձայն են, որքան նուազ խառնուրդ է եղած ծնիչ զուգաւորութիւն-

ներու մէջ, միեւ նոյն ընտանիքին կամ մի եւ նոյն ցեղին համար, կամ թէ ընդհակառակը աննմանութիւնները եւ տարբերութիւնները այնքան աւելի մեծ են որքան խառնուրդները աւելի շատ եղած են:

Անհատականութեան սուտ-խմաստաբերները կրնան ուրանալ ժառանգականութիւնը, իրենց ալամատութիւնը (dialectique) բնաւ չպիտի համոզէ անասնաբոյժերը, որոնք լաւ գիտեն սր աւելի հաւանականութիւն կայ յովատակիմը (օրնակ Կրսիսոր) լուսնահակուած քաջացիկ զամբիկի մը հետ միաւորութեանն ընթացող գեղեցիկ ձև մը սնտանալու, քան թէ բեռնատալի մը լծուած յալատալի՝ մը վարձախառքի կառապանէ մը փոխ աւնուած պակասաւոր զամբիկի մը հետ զուգաւորութեանն:

Ինչ որ քանիք այդ մասին, ինչ որ ալ կարենանք ընել կամ փողոթել, սկզբնական ճակատագրականութիւն (fatalité) մը կը սաւառնի մեր ամէնուն վրայ եւ, ողղակի կամ անուղղակի կերպով ու աստել կամ նուազ մեծ, չափով մը, մեզ պատասխանատու կրնծայէ մեզ սերունդներուն համար: Բնախօսական անսակէտով, գողաւոր (syphilitique) մը, ալքոլամոլի, մը թոքախտաւորի մը, վերնոտի մը զաւակը վարակուած է ծնած ատեն այլասեռութեամբ մը կամ տկարութիւնով մը, ուրկէ ազատելու համար ոչ՝ ազատ է եւ ոչ՝ տէր է, եւ որոնք իրեն թոյլ չեն տար, ինչպէս կըսեն պերճ բառերով անհատական վարդապետականները, իր ճակատագիրին ծրագիրը ինք կազմելու: Խիակ բանը, զոր ն'ա գրեթէ ազատ ըլլայ ընելու, ինքնասպանութիւնն է, եթէ ունի իր այլասեռութեան մասին գիտակցութիւն, զոր ունենալ նոյն իսկ իրեն չթոյլատրեր իր վիճակը:

Անոնք նոյն իսկ՝ որոնք իրենք զիրենք գերծ կը կարծեն այս բնախօսական արատներէն, սակայն եւ այնպէս ենթարկուած են սկզբնական ճակատագրականութեան: Կազմուածքի կամ հիւսուածքներու գործարանական մասնաւոր կարգաւորումներ են, զորս կը՝նդունին զիրենք սերունդներէն եւ զորս չեն կրնար փոխել, որ զանոնք կ'ընծայեն կաթուածական, արեւակուտական (congestif) ջղային, զղայուն, խոհուն կամ ինքնակամ, քաջ կամ խոհեմ, ջանասէր կամ մտացիր (distrait) կարճատես կամ բացա-

տես, զիւրահաւատ կամ երկբայող: Երբ Միսէ ըսել կուտայ իր մարտօշէին, խօսելով իր ծնողին եղբոր — լուսարարին, «մեր զանկերը միեւ նոյն կերպով չինուած չեն», հոտ է մեր ճակատագիրներուն, կարծիքներուն, ընթացքներուն ամբողջ բաղադրութիւնը: Բայց ամէնէն յամառ անհատականները անկասկած պիտի խոստովանին որ մէկը չէիներ ինք իր զանկը, եւ թէ նոյն իսկ չկրնար մին աւա՛ղ, ուղածին պէս չինել իր ազգքներուն:

Առհաւա՛յան, կալեային եւ բնախօսական, եղբնական կա՛մ ժառանգական պատճառներէն զտո՛ր որոնք կ'ազդեն էակներու ճակատագիրին վրայ, կայ բարի մը, ալ՝ աւելի խորհրդաւոր, որ իր ներգործութիւնը ունի ահա՛ր (ճակատագիր) վրայ — այն պատճառն է, որ առաջ կուգայ ծննդական արարքին պարագաներէն եւ պայմաններէն, որուն (արարք) մէջ՝ ծնանիւթք անհաւոր բացարձակապէս ոչինչ է եւ որուն պատասխանատուութիւնը կը կրէ սակայն գրեթէ իրամբողջ կեանքին մէջ:

Պարոն Ֆօրի պարագային առթիւ, կարծեմ Պ. Հանրի Ֆուրիէ կ'ըսէր թէ ինչ որ զինք կը զմանցնէր մոլոսական օրէնքին հետ, ասոր յաջորդ սերունդին վրայ ծանրացնող պատասխանատուութիւնն է: Այս պարագային մէջ, կերեւի թէ Պ. Հանրի Ֆուրիէ սխալ հասկցած է երաջական ժողովուրդին առաջնորդին միտքը:

Մոլոսէս՝ մեծ գործօն իմաստասէր մ'էր, մեծ օրէնադիր մը եւ մեծ քաղաքագետ մը, որ մտածած էր մարդուն եւ ընկերութիւններու ճակատագիրներուն վրայ: Եր կարծէր, ոչ առանց պատճառի, թէ ճակատագրական մարդկութիւնէ զուրա արդարութիւնը — բնութեան եւ իրերուն արդարութիւնը, վերջապէս կո՛ւնենայ միշտ իր գաղափար, եւ թէ՛ չպատժէր նոյն իսկ անհատը իր բնութեան բրած նախատինքներուն եւ իր նմաններուն ու ընկերութեան հասուցած անիրաւութիւններուն համար, կը պատժէ առանց համար իր սերունդը, յաջորդները եւ ժառանգորդները, այնքան աւելի խոտորէն որքան աւելի երկար սպասած է հարուածելու համար: Հաստատելով առողջապահական օրէնքներ եւ ընկերական օրէնքներ, անոնց չէր տար գաղափար մը, մեր արդի օրինագիր շինողներուն կերպով

վր որոնք օրէնքներուն գործադրութիւնը կը յանձնեն ոստիկաններուն, քաղաքագա՛ն զինուորներուն, դատաւորներուն, բանտապահներուն եւ գահճներուն, այլ ճանչնալով երբայցեցիներուն իրենց զաւակներուն համար ունեցած հոգը, անոնց կ'ազդարարէր որ պիտի պատժուէին իրենց զաւակներուն մէջ մինչեւ երրորդ սերունդ, եթէ բռնաբարէին օրէնքը որ արտայայտութիւնն էր հարկին: Անոնց չպիտի ազդարարէր հարկաւ թէ իրերը տեղի պիտի ունենան սակայն եւ այնպէս: Դատ հայրախնամ եւ շատ իմաստասուն էր անոնց ազդարարելու համար ատիկայ Որպէս զի մոլոսէս, որ յիմար մը չէր, կարծած ըլլայ թէ այսալիքարարութիւնը օգտաւէտ էր, եւ որպէս զի անոր պատուիրանի մը ձեւ առած ըլլայ, պէտք էր որ ինք համոզուած ըլլար իրողութիւններէն թէ այն ժողովուրդ՝ որուն խօսքը կ'ուզէր, բաւական հոգ կ'ընէր իր սերունդին ճակատագրին մասին որպէս զի այս հոգը ալ չէր իր արարքն ըլլայ: Ասոյք է որ այսօր պատահաբանը չպիտի ունենար ո՛րեւէ բարոյական ստեղծութեան զօրութիւն: Ամէն օր կրնայ մէկը կրկնել զինովի մը թէ իր սղաքները պիտի անդարմանելի կերպով կրեն իր զենովութեան պատիժը, այս նկատումը զինք չպիտի արդիւն խմելէն:

Նմանապէս կրնայ մին օրուայ ամէն ժամուն կրկնել մեր ժամանակակիցներուն թէ իրենց սերունդները թերեւս անպթօրէն պիտի կրեն անկարողութեան եւ բարոյական ու ընկերական անխիթանութեան պատիժը, որոնց մէջ կ'ազդին եւ որոնց հեղինակները ու մեղսակիցները են ամէն մէկերնին իրենց կերպովը, այս քարոզութիւնը բնա՛ւ բան մը չպիտի փոխէ իրենց բնութիւններէն, սովորութիւններէն եւ ընթացքէն: Սերունդները պիտի աւատեն օձիքնին ինչպէս որ կրնան:

Յեղափոխութեան ջատագով պատմաբանները արդարացիօքին, ոչ առանց պատճառի երեւոյթի սակայն, այս դարուն դատապարտութիւնները եւ կոտորածները, աւատաւան երկար ստրկութեան ծայրայեղութիւններովը: Այս արդարացումը վերջ ի վերջոյ ընդունելի է, բայց պէտք է խոստովանիլ որ եթէ անիկայ համաձայն է ակնընդակա՛նի օրէնքին, բնա՛ւ համաձայն չէ անհատական պատասխանատուութեան վարդապետութեան: Տառնութիւնորդ դարուն մեծ մաս մը ազնու

ւականներ, նախաշարժիչ կամաշակերտ՝ նոր իմաստասիրութեան, որ պիտի ըլլար յեղափոխական գազափարը, բարենորոգումներու առաջին եւ ամէնէն անկեղծ կուսակիցները արտաքսուեցան կամ մահուան դատապարտուեցան, որովհետեւ իրենց նախնիքները պատերազմական տխուր պայքարներու օրերուն մէջ խիստ կերպով վարուած էին հողագործ ստրուկներու ցեղին հետ, որ չուէր ո՛չ ոյժ եւ ո՛չ կարողութիւն ապստամբելու: Միւս կողմէն, թէեւ ճշմարտապէս յանցաւոր էր նենգութեամբ եւ մատնութիւմբ, Լուզովիկոս Ժ.Չ. քաշեց կառախնաբեմին վրայ շատ աւելի իր նախորդներուն Լուզովիկոս Ժ.Ի. Լուզովիկոս Ժ.Ի եւ իր կնոջ Աւստրուհին յանցանքները քան թէ իրենները, ինչպէս Կարոլոս Ա. պատժուեցաւ դահիճին կացինով շատ աւելի Յակոբ Ա. ի «ոճիրներուն եւ Հանրիէթի դաւերուն համար քան թէ իր բուն անիրաւութիւններուն համար:

Նաշովէոն Ա. պատմութեան մէջ հազուադիւրս պարադաններու զուգադիպութեամբ մը կրեց ինք իր գործերուն պատասխանատուութիւնը, ուրկէ իր զինուորական հանձարը չկրցաւ ազատել զինք: Բայց ծանր ժառանգութիւն մը ձգեց երկու ժողովուրդներու — քակտուած Գերմանիային եւ պարսեալ Ֆրանսայի, որ վերածուած անհարազատ կառավարութեան մը, յեղափոխական էր իր քաղաքական հաստատութիւններուն մէջ, միապետական եւ խորհրդարանական՝ իր կառավարչան հաստատութիւններուն մէջ եւ աւատականօրէն անիշխանական իր տնտեսական վիճակին մէջ:

Կրնային՝ 1815 էն մինչեւ 1870, իմացականութեան հետադարձութեան, իմաստութեան ուժով փոփոխել այս վիճակը, ստեղծել իրերու բանաւոր կարգ մը՝ որ կարելի ընէր անհրաժեշտ դարձած բնաշրջութիւն մը, մի եւ նոյն ատեն ուղղելով յեղափոխական դրութեան սխալանքները եւ կայսերական սխալները: Կարելի է պնդել: Բայց աս գործին համար պէտք էր հանձարի տէր մարդ մ՝ որ չգտնուեցաւ. որովհետեւ անհատական ճակատագիրը՝ զոր մեղ կը գովեն, է միշտ հանձարի տէր, հնարող, յաղթական, զինող (sqeculateur) մարդու մը ձեռքը, որ կը փոխէ ազգի մը կամ աշխարհի մը գոյութեան պայմանները:

շարունակելի

ԺԱՆՎԱՐ ԴՈՒՍՈ

Է Մ Ի Լ

Ռուսոն ճանչցուած չէ դեռ ամէնէն այնպէս ինչպէս որ է ինք: Նոյն իսկ Եւրոպայի մէջ շատեր կը ճանչնան զինք աւելի իր պակասութիւններով, այլ երբէք այն հանձարը որ ընկերական բարեկազմութեան խնդիրով զբաղելով, որոտաց կրթական, առանին եւ քաղաքական գեղծութիւններուն ու անիրաւութիւններուն զէմ, երբէ՛ք այն հանձարը՝ որ տառապող մարդկութեան վշտակրեցաւ եւ կարծեց պատրաստել անոր բարեբաստութիւնը իր եմիլով, իր ընկերական պայմանադրութիւնով, երբէք այն հանձարը վերջապէս որ հզօրապէս նպաստեց Ֆրանսական յեղափոխութեան, ենչպէս նաեւ Ֆրանսայի արդի վարչական կազմակերպութեան:

Այս շատերը՝ յանկերգի մը պէս կը կրկնեն ամէն անգամ որ Ռուսօի վրայ խօսք կը ըլլայ, ինչ որ լսած են այս հաղուադիւրս դադափարի առաքեալին թշնամիներէն: Բայց որքան զօրաւոր ալ ըլլան ասոնք, ճշմարտութեան չափ հզօր չեն կրնար ըլլալ, եւ ճշմարտութեան բարեկամ ներհուն միտքեր ճշգրտ են այն արժանաւոր տեղը, զոր Ռուսօ կը գրաւէ աշխատած ամէն ճիւղին մէջ:

Նը փափագինք ներկայացնել Ժիւլ Սթէկի ծանօթութիւնն որ կը գտնուի իր վերլուծմամբ եւ ծանօթագրութեամբ հրատարակած էմիլի Բ. գիրքին սկիզբը: Ասով կը յուսանք գէթ հետաքրքրել կարգ մ' անտարբեր միտքեր Ռուսօի մասին եւ օգտակար ըլլալ այն ուսուցիչներուն, որոնք կա՛մ բնագիրը կարդալու անկարող են եւ կամ միջոցները չեն ներած մինչեւ այս մարդուն հասնիլ եւ գաղափար մ' ունենալ իր նշանաւոր գործին վրայ, ինչպէս նաեւ իր կեանքին:

Ահաւասիկ թարգմանութիւնը

Դանթոնիս

Ժան Վալ Ռուսօ ծնած է Ժընև 1712 յունիս 28 ին: Իր մայրը, բողոքական եկեղեցիին մէկ քարոզիչին աղջիկը, մեռաւ

ծննդագրերով թեկնէն: Իր հայրը վարպետ ժամագործ մ'էր եւ Վրէք գործվանքով մեծ ցույց առաջին տարիներէ: Իր դրացիներէն մէկուն հետ ունեցած կոռուի մը պատճառով ժնէվէն մեկնիլ ստիպուելով յանձնեց սղան ասոր մէկ մօրեղբորը Պէրնար անունով, որ քարոզիչ Նամպէրսիէի քով գրաւ գաջն ուսնելու համար եւ վերջը աշկերտութեան տուաւ փորագրիչի մը մօտ:

Դեռատի սկսնակը, դատարկապոյտ բնաւորութեամբ կը փախչի վարպետին քովէն տանըվեց տարեկան հասակին մէջ եւ կսկսի արկածալից կեանք մ'որ զինք վերջապէս Բարիզ կ'առաջնորդէ:

Հետզհետէ ծառայ, դատարակ, զեւպանատան քարտուղար, գրագիր, երաժիշտ, ձայնագրութեան ընդօրինակիչ, գրագէտ, նա զարմացուց աշխարհ իր տարօրինակութիւններով, իր փայլուն աշխատասիրութիւնն եւ իր հլու արհեստով, իր դարուն ամէնէն նշանաւոր անձնաւորութիւններէ: Հետ ունեցած յարաբերութիւններովը եւ գծաւորութիւններովը:

Կրած է իմաստասիրական, քաղաքական բարոյական, գուսաներգական, վիպական, գրական գործեր: Միշտ աղքատ, յաճախ իսկ թշուառութեան մասնուած, հալածական թափառելով կարգաւ Բարիզ, Զուրիցերիա, Անգղիա, Բրովանս, իվերջոյ հիւանդ ու սեւամազձոտ կուզայ իր վերջին օրերն անցնելու Պարոն տը ժերարաէնի մօտ, Էրմընոնվիլի կալուածին մէջ, ուր կը մեռնի 1778 յուլիս 3 ին:

Իր աճիւնը հանդիսաւոր կերպով Բանթէոն փոխադրուեցաւ 1794 ին:

Իր զխաւոր գործերն են թուականի կարգով,

Ճառագրութիւն արդի երաժշտութեան վրայ. 1742. իր նշանաւոր ճառ՝ գիտութիւններու ու արուեստներու վրայ, տիժոնի ակադեմիայէն առաջարկուած մրցումի մ'առիթով 1749.

Գիշիլն գուշակը, գուսաներգութիւն՝ որուն եղանակը ինք հեղինակած է եւ որ ներկայացուած է արքունիքին մէջ 1752ին.

Նամակ փրանսական երաժշտութեան վրայ. 1753.

Ճառ վիճակներու անհասարարութեան վրայ, 1754.

Փորձերի յեղունեւում ծագման վրայ. 1755

Նամակ առ տ'Ալամպեր քաւոնի վրայ, 1758.

Նամակի ձեւով Նոր Էջօրի վեպն. 1761. Ընկերական պայմանագրութիւն, Էնիլ, Եփրեւի Ղեւսացիւն, երեքը մէկտեղ հրատարակուած 1762 ին.

Երաժշտական բառարան, հեղինակուած Մոթիէի մէջ 1763 էն մինչեւ 1765.

Լեռան նամակներ, հրատարակուած վերջին տարիները.

խստոյանաւ, 1770.

Մենաշրջիկի վեր սրաւախօսութիւնները եւ երազանկերը, գրուած եւ հրատարակուած իր կեանքին վերջը:

Էնիլը դատարակութեան վերաբերեալ երկ մ'է, հինգ զիրքերու բաժնուած: Կ'անէ սղան իր ծնած վայրկեանէն եւ կը հասցնէ զայն մինչեւ ամուսնութիւնը:

Առաջին գիրքը նուիրուած է կեանքի առաջին տարիներուն: Իմաստուն խորհուրդներ կուտայ մօր մը՝ սղան զիւցնելուն վրայ, խանձարուրին վրայ որ բնաւ արգիլելու չէ անգամներուն ո' եւ է չարժուծը, առաջին խնամքներուն վրայ, զորս հարկ է տալ փոքրիկ արարածին, որպէս զի սա զարգանայ առանց նեղութեան, առանց չտապի, բնութեան կամքովը, որ միակ դատարակնէ այս տարիքին յարմար:

Երկրորդ գիրքը կ'անէ սղան իր հինգերորդ կամ վեցերորդ տարիէն եւ կը հասցնէ մինչեւ 12—րդ տարին. զգացումներու կրթութեան ժամանակն է այս:

Երրորդ գիրքը կը բաղի մտաւորական դատարակութեամբ: Տղան ալ այսուհետեւ բարեկազմ, է քաջառողջ, կորովի: Իր բանականութիւնը կսկսի երեւիլ: Զինք կրթելու կսկսին, ոչ թէ մեքենական միջոցներով, այլ տակաւ տակաւ զրգուելով իր հետադրութիւնը ճարտար ու բազմապատիկ փորձերով եւ ասոնցմով հասցնելով զինք այն վիճակին, ուր ինքնին գտնէ զիտութեան տարրական սկզբունքները եւ անոնց գործնական կիրառութիւնները: Այսպէս զինք կ'առաջնորդեն մինչեւ տանընդիւրբ տարին այնպիսի ուսումներով, որոնք ձանձրոյթ չեն առթեր, որոնք կը կրթեն միւլենոյն ասեն հմայելով զինք, որոնք կը զարգացնեն իր կարողութիւնները. նոյն իսկ անոնց կիրառութեամբը:

Չորրորդ գիրքը կը խօսի պատանիին

բարոյական եւ կրօնական դաստիարակութեան վրայ: Մինչեւ հիմայ նա՝ տգէտ է մնացած բարոյական գաղափարներու եւ Աստուծոյ գաղափարին մասին: Հասած է վայրկեանը որ անոնց մասին կրթութի: Այս գիրքն է որ կը պարունակէ Սաւուացի փոխերէցին հաւատոյ գաւառութիւնը, որ 'Ռուսօի' կրօնքի վրայ ունեցած զգացումներու եւ տեսութիւններու ներկայացումն է:

Հինգերորդ գիրքը վերջապէս կը զգրադի Սոֆիի դաստիարակութեամբ, որ էմիլի սահմանակը նշանածն է: Այս վերջին գիրքը՝ կարճ խօսելով, համառօտ երկասիրութիւն մ'է աղջիկներու դաստիարակութեան վրայ, նուազ հաստատուն, նուազ լուրջ, նուազ իմաստասօրէն հետեւում, որքան չեն դործին միւս մասերը: Զգալի է որ Ռուսօ՝ նուազ կարեւորութիւն կ'ընծայէ այս նիւթին եւ զայն բրած չէ երկար ատեն եւ խիստ կերպով իր խորհրդածութիւններուն ու իր ուսումնասիրութիւններուն առարկան: Հոն աւելի փարած կը մնայ աւանդութեան եւ իր ժամանակի սովորութիւններուն:

Երկրորդ գիրքը մեզ կ'ընծայէ սա մասնաւոր շահեկանութիւնը որ տղով կը զբաղի այն տարիներուն մէջ, զորս կ'անուանենք գաղութական տարիք: Մեր երկրին տղոց մեծ մասին համար այն ժամանակն է այդ, ուր անոնք գաղութ կը մտնեն, կը վստահացուն ուսուցիչներուն, պարտին սովորիլ ինչ որ պէտք պիտի ըլլայ իրենց կեանքի մնացած մասին մէջ: Ուրեմն այն ժամանակամիջոցն է այդ, որուն համար մանկավարժական խորհուրդները կրնան ամէնէն աւելի օգտակար ըլլալ մեր ուսուցիչներուն:

Ճամբիսը խօսելով, եթէ մէկը երեւոյթէն դատէ, այնպէս կ'երեւայ որ Ռուսօի գիրքը իրենց համար մեծ կարեւորութիւն մը չպիտի ունենայ: Իր գաղափարական աշակերտը՝ որուն էմիլ անունը կուտայ, ամենեւին մեր գաղութներու աշակերտը չէ: Ժողովուրդի տղայ մը չէ, մեծցած իր ընտանիքին ծոցը, իր ընկերներուն մէջ տեղ, ազգային վարժարանի մը մէջ: Մինակ է նա՝ առանց ծնողքի, առանց բարեկամի, առանց ընկերի: Ունի կառավարիչ մ'որ իրեն կը հետեւի ամէնուրեք, քայլ առ քայլ, արեւածագէն մինչեւ արեւամուտը արեւամուտէն մինչեւ արեւածագ: Սովորելու համար ստիպ-

ուած չէ փութալ, ժամանակ կայ, վիճակ ուած չէ իր գիրքերը եւ տեսարանները թողուլ իր 13—րդ տարին եւ աշակերտութեան մտնել:

Այն վայրկեանին, ուր մեր նախնական վարժարանի աշակերտները կը թողուն դպրոցը, էմիլ նոր պիտի սկսի իր ուսումը եւ պիտի շարունակէ զայն հանդարտօրէն, յաւրտէն, գաւառային կեանքի մը աշատութեան մէջ, մինչեւ որ կատարեալ երիտասարդ մը դառնայ:

Նոյն իսկ այն աղաքները՝ որոնք կոչուած են աւելի երկարօրէն շարունակելու իրենց ուսումը, չեն գտնուիր այն պայմաններուն մէջ, ուր դրած է Ռուսօ իր էմիլը, եւ ոչ ա՛լ նոյն իսկ անոնց համար կարելի է իր մեթոտին ուղղակի կիրառութիւնը ինչպէս նաեւ ծրագիրը: Ասոնք մարդկային ընկերութեանէն կղզիացած անջատուած չեն, ուսուցիչի մը յարատեւ ընկերութեան են թարկուած. մարդիկ զանոնք կը չրջապատեն ամէն կողմէ. իրենց ապագայ ասպարէզին հարկաւորութիւնները զիրենք կը փութացնեն այն վայրկեանին, երբ էմիլ նոր կը փնտռէ զբօսնելով թէ ո՛ր կողմէն արեւը մայրը կը մտնէ:

Ուստի կարելի չէ խնդիր ընել այս գիրքին գործածութիւնը իբրեւ ապահով ուղեցոյց մը, իբրեւ ուսուցիչին մէկ անբաժանելի ընկերը: Եթէ ուղէ ընթօրինակել, միայն սխալներ պիտի գործէ, եթէ ուղէ հաւատարմօրէն հետեւիլ, պիտի մոլորի, եթէ ջանայ էմիլներ կաշմել տիպարին ճիշդ նմանութեամբ, պիտի բազմի ամէնէն անհեթեթ եւ ամէնէն յոռի արդիւնքներուն:

Աննելով ճիշտ ինչպէս որ է, էմիլ ուրիշ բան չէ բաց եթէ վէպմը, հակափառութիւն (բարատոքս)ներու հիւսուածքի մը, դաստիարակութիւն մը, մտացածին եւ ամպերուն մէջ:

շարունակելի

Отговорникъ Д. Коларовъ.